

## Հաղորդագրություն

### 2024 թվականի մարտի 29-ին կայանալիք Դատավորների ընդհանուր ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրության վերաբերյալ

2024 թվականի մարտի 29-ին հրավիրված Դատավորների ընդհանուր ժողովին Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրությունը կազմակերպելու նպատակով Դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատարը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 76-րդ հոդվածի 1-5-րդ մասերի կարգավորումներով, 2024 թվականի փետրվարի 28-ին ծանուցագրեր է ուղարկել Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թեկնածուի համար Սահմանադրությամբ և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված պահանջները բավարարող՝ Վերաքննիչ քրեական դատարանի՝ 10 և Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 1 դատավորի:

Վերաքննիչ քրեական դատարանից ստացվել է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թեկնածուների 9, իսկ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանից՝ 1 դիմում՝ իրենց անունները քվեաթերթիկում չներառելու մասին, ինչպես նաև՝ քվեաթերթիկում ներառված Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը:

Այդպիսով, 2024 թվականի մարտի 29-ին հրավիրված Դատավորների ընդհանուր ժողովին Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրության քվեաթերթիկում ներառվել է մեկ թեկնածու:

Ը/հ	Դատավորի Անունը, ազգանունը, դատարանի անվանումը
1.	Վազգեն Ռշտունի (Վերաքննիչ քրեական դատարան)

Դատական դեպարտամենտ